

Հ. Հ. Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-1/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար

Առաջին կարգի մասնագետը՝ ա/կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով.

բ/իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքներ
գ/ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքը.

դ/կատասխանատվություն է կրում համակարգչային մոտեցմամբ համայնքապետարանից ելքագրվող, ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար.

ե/ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթեր.

զ/հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականներին համապատասխան ժամկետներում կատարմանը, որոնց արդյունքների մասին գեկուցում է աշխատակազմի քարտուղարին.

է/աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը՝ անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների սահմաններում.

ը/իրականացնում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները աշխատակազմի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող նորմատիվ իրավական ակտերի առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և այլ արխիվացման աշխատանքները.

թ/կիսամյակը մեկ անգամ աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում իր կողմից կատարված պաշտոնի անձնագրով նախատեսված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն.

ի/առաջին կարգի մասնագետն ունի օրենքով նորմատիվ իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ.

լ/առաջին կարգի մասնագետն իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝ ա/միջնակարգ կրթություն առանց աշխատանքային ստաժի.

բ/պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.

գ/համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Ունի ՀՀ <<Սահմանադրության>>, <<Համայնքային ծառայության>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>, <<Գույքահարկի մասին>>, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2019թ. հուլիսի 9-ին, ժամը 12:00-ին, Մրգաստանի համայնքապետարանի շենքում:

Դիմող՝ Հ. Հ. քաղաքացիները աշխատակազմ կամ Հ.Հ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

-Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս/

-Կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ /պատճենը/

-Աշխատանքային գրքույկ /պատճենը առկայության դեպքում/

-Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին:

-Արական սեռի անձինք զինգրքույկ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր ու զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը, բնօրինակի հետ կամ համապատասխան տեղեկանք:

-Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հ. Հ. կառավարության 2005թ. մարտի 3-ի N 310 որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:

-Տեղեկանք ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից, որ նշված անձը նախկինում դատապարտված չի եղել, հետախուզման մեջ չի գտնվում և նրա վերաբերյալ ոստիկանությունում վարկաբեկիչ նյութեր չկան:

-Երկու լուսանկար 3x4 չափսի:

-Անձնագիր և անձնագրի պատճենը:

-Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, բացի ոչ աշխատանքային օրերից ժամը 9:30-ից-17:30:

-Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2019թ. հունիսի 24 -ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող Հ. Հ. քաղքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել` Հ. Հ. Արմավիրի մարզ Մրգաստանի համայնքապետարան /հեռ. 0231-6-38-10/ կամ Հ. Հ. Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն:/հասցե Աբովյան փ. 71 հեռ. 0237-2-07-70/: